

ՎԵՐԻՑ ՎԱՐ, ԹԵ՛՛ ՎԱՐԻՑ ՎԵՐ

“We have two ears and only one tongue
in order that we may hear more and speak less.”
Diogenes Laertius

Լեզվի հիմնական գործառնությունը հաղորդակցվելն է սակայն չպետք է մոռանանք, որ հաղորդակցությունը թերի կլինի եթե այն ինչ մենք ասում ենք չհասկացվի խոսակցի կողմից: Հողվածը նվիրված է օտար լեզու ուսումնասիրողների ունկնդրելու հմտությունները զարգացնելու երկու հիմնական եղանակներին՝ վերից վար (Top-down) և վարից վեր (Bottom-up) և դրանց կիրառմանը լսարանում: Ինչպես նաև կառաջարկենք որոշ կայքեր, արտալսարանային ինքնուրույն աշխատանքի համար:

Բանալի բառեր. մեթոդաբանություն, վերից վար եղանակ, վարից վեր եղանակ, ունկնդրում, հաղորդակցություն, օտար լեզվի ուսուցում

Մեր ժամանակներում արդյունավետ հաղորդակցման համար մեզ առաջին հերթին հարկավոր է սովորել լսել դիմացիներին, իզուր չէ, որ անգլիախոսներն ասում են. “a good communicator is first of all a good listener.”: Ինչպես, քչերն են լիարժեք տիրապետում լսելու արվեստին: Գործը բարդանում է, երբ բախվում ենք օտար լեզվի գեղեցիկ, բայց միևնույն ժամանակ բառիս ուղղիղ իմաստով «օտար» հնչյունների հետ: Որպեսզի այս գործընթացը հնարավորինս դյուրին և հաճելի լինի լեզու ուսումնասիրողների համար ուսուցիչը նախ և առաջ պետք է օգնի ուսանողներին մշակել որոշակի ռազմավարություն, որը կնպաստի լսելու հմտությունների զարգացմանը:

Ի հակադրություն այն թյուր կարծիքի, թե ունկնդրումը պասիվ գործընաց է, որտեղ ունկնդիրն ունի փոքր դերակատարություն, իրականում մենք ակնհայտաբար ենք լինում մի բարդ մեխանիզմի գործարկմանը: Յուրաքանչյուր ունկնդիր տարբերակում է հնչյունները, բառային և քերականական կառույցները, մեկնաբանում հնչերանգը, շեշտը և, ի վերջո, կիրառելով բոլոր վերը նշված հմտությունները՝ դիտարկում խոսքը սոցիալ-մշակութային համատեքստում: Անգլերենը որպես օտար լեզու ուսումնասիրողները լսելիս առավելապես բախվում են հետևյալ խնդիրների հետ. մի կողմից նրանք չեն կարող վերահսկել խոսքի արագությունը և երբեմն դժվարանում են տարբերակել այն հնչյունները, որոնք առկա չեն իրենց մայրենի լեզվում: Մյուս կողմից, նույնիսկ եթե հաջողվում է ճիշտ լսել հնչյունները, նրանք ունենում են մեկնաբանելու խնդիրներ, քանի որ չունեն բավականաչափ հենքային բառապաշար, քերականական, հնչյունաբանական գիտելիքներ: Հարցը բարդանում է, երբ խոսքը լի է լինում խոսակցական բառերով, դարձվածներով, մեղմասություններով ...

Ունկնդրելու հմտությունները զարգացնելու հիմնական եղանակները երկուսն են՝ **վերից վար (Top-down)** և **վարից վեր (Bottom-up)**: Այս եղանակների

ընտրությունը մասնավորապես կախված է լեզու ուսումնասիրողների լեզվի իմացության մակարդակից: Վերից վար եղանակի կիրառման դեպքում առանցքային է ունկնդրի դերը: Վերջինս կիրառում է իր հենքային գիտելիքները տվյալ թեմայի, իրադրության կամ համատեքստի մասին: Այս գիտելիքները հնարավորություն են տալիս մեկնաբանելու լսածը և կանխատեսելու հաջորդիվ եկող տեղեկատվությունը: Տվյալ մեթոդը ներառում է՝

- ունկնդրում՝ հիմնական գաղափարը ընկալելու նպատակով /listening for the main idea/
- կանխատեսում /predicting/
- եզրակացություններ /drawing inferences/
- ամփոփում /summarizing/

Վարից վեր մեթոդի հիմքում տեքստն է: Ունկնդիրը հիմնվում է արտաբերվող խոսքի վրա՝ որպես հնչյունների, բառերի և քերականության իմաստատեղծ համադրություն: Նախ տարբերակվում են ամենափոքր տարրերը՝ հնչյունները: Օրինակ [p]-ն դիտարկվում որպես [p] և ոչ թե [b], [i:]-ն [i:] և ոչ թե [i] կամ [e] և այլն: Հնչյունները վերածվում են բառերի, հետո քերականական կառույցների և այսպես շարունակ մինչև հանգում ենք իմաստի: Այս եղանակը ներառում է՝

- ունկնդրում՝ նյութի հատուկ մանրամասներն ընկալելու նպատակով /listening for specific details/
- ազգակից բառերի տարբերակում /recognizing cognates/
- շարադասություն /recognizing word-order patterns/

Իրական կյանքում ունկնդրելիս մենք սովորաբար կիրառում ենք երկու եղանակները միաժամանակ: Լսելու ժամանակ վերից վար և վարից վեր եղանակները փոխազդում են և այս փոխազդեցության արդյունքը փոխըմբռնումն է (Peterson, 1991): Չնայած նրան, որ այս գործընթացները մայրենի լեզվում ինքնին են ընթանում, ուսանողներին հարկավոր է սովորեցնել կիրառել այդ հմտությունները օտար լեզվով հաղորդակցվելու համար: Յուրաքանչյուր առաջադրանք պետք է ծառայի մեկ կամ մի քանի լսողական հմտությունների զարգացմանը: Այն կարող է ունենալ մեկից ավելի նպատակ կամ արդյունք, սակայն չափից ավելի շատ պետք չէ ծանրաբեռնել սկսնակ ուսանողների ուշադրությունը:

Վերից վար և վարից վեր եղանակները քննարկելիս Ռոբերտ Նորիսը պնդում է, որ երբեմն ուսուցիչները գերազնահատում են վերից վար եղանակի դերը լեզվի ուսուցման մեջ: “Many of the listening materials on the market today are concerned chiefly with helping learners become more adept at improving top-down skills by having them (identify relevant information while ignoring unnecessary details.) In order to simulate the knowledge that native speakers bring to listening, learners are often provided with vocabulary lists prior to the task and told who the speakers are, what the situation is, and what the topic is about. However, scant attention is paid to the phonological characteristics that mark informal. This seems a bit like putting the cart before the horse.” /Norris, 1995:47/: Ըստ Նորիսի առավելագույն արդյունավետության հասնելու համար ուսուցիչը պետք է

զուգակցի երկու եղանակները՝ համապատասխանեցնելով ընտրված հնարները իր լսարանի պահանջներին /Norris, 1995:47/:

Այսպիսով, պետք չէ անտեսել բառային, քերականական և հնչյունական առանձնահատկությունները օտար լեզվի դասավանդման ընթացքում և հնարավորինս զարգացնել այդ հմտությունները՝ հատկապես լեզվի ուսուցման վաղ փուլերում: Հայտնի է, որ լեզվակիրներն էլ ոչ բոլոր հնչյուններն են լսում խոսքի ընթացքում, սակայն այս փաստը էապես չի անդրադառնում խոսքի ըմբռնման վրա: Մյուս կողմից եթե խոսքը վերաբերվում է օտար լեզվին՝ նույնիսկ չնչին շեղումը դասական տարբերակից կարող է առաջացնել թերըմբնում: Եկեք դիտարկենք հետևյալ օրինակները՝ *umgernaseeyimlader* և *eelerbinsurprised*: Անգլիախոս մարդու համար մեծ դժվարություն չի ներկայացնի վերծանել այս հնչյունների խումբը, «թարգմանել» դրանք՝ արդյունքում կունենանք հետևյալ տարբերակները՝ *I'm going to see him later* և *He'll have been surprised* (անկախ այն փաստից, որ *to, will, have* բառերը իրականում չեն արտասանվում): Լեզվակիր ունկնդիրների համար այս գործընացը մեծ դժվարություն չի ներկայացնում, քանի որ նրանք ենթագիտակցական մակարդակի վրա տիրապետում են լեզվի թե՛ քերականական, թե՛ հնչյունական առանձնահատկություններին և մեխանիկորեն լրացնում են բոլոր բացերը:

Օտար լեզվի ունկնդրման հմտությունների զարգացմանը ծառայող լավ մշակված առաջադրանքները պետք է բաղկացած լինի ճիշտ փոխկապակցված փուլերից: Դրանք են՝ *նախքան ունկնդրելը իրականացվող առաջադրանքները* (*pre-listening activities*), *ունկնդրելու ընթացքում կատարվող առաջադրանքները* (*while-listening activities*) և *ունկնդրելուց հետո կատարվող առաջադրանքները* (*after-listening activities*):

Այս համատեքստում շատ կարևոր է *նախքան ունկնդրելը իրականացվող առաջադրանքների* դերը ունկնդրելու հմտությունների զարգացման գործում: Այսպիսի առաջադրանքները օգնում են ուսանողին ակտիվացնել իրենց հենքային գիտելիքները և հստակեցնել սպասելիքները լսվելիք տեքստի վերաբերյալ: Ավելին, հմուտ ուսուցիչը խնամքով մշակված հարցերի շնորհիվ ակտիվացնում է ուսանողների հենքային գիտելիքները և լեզվի իմացությունը և օգնում է նրանց հասկանալ տեքստը առանց այդ տեղեկատվությունը ուղղակիորեն նրանց տալու:

Նախքան ունկնդրելը իրականացվող առաջադրանքները կարող են ծառայել մի շարք նպատակների: Ուսուցիչը կարող է՝

- ստուգել ուսանողների հենքային գիտելիքները՝ ինչպես տվյալ թեմայի վերաբերյալ, այնպես էլ բառային և քերականական նյութի վերաբերյալ:
- անհրաժեշտության դեպքում տրամադրել ուսանողներին որոշակի տեղեկատվություն, որը կնպաստի նյութի ընկալմանը կամ ակտիվացնել ուսանողների մոտ առկա գիտելիքները:
- անհրաժեշտության դեպքում տրամադրել մշակութային տեղեկատվություն, որը կնպաստի նյութի ընկալմանը:
- ներկայացնել լսվելիք նյութի տեսակը և այն ունկնդրելու նպատակը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այն մարդիկ, ովքեր ունեն կռահելու զարգացած հմտություններ ավելի լավ են ըմբռնում արտաբերված խոսքը: Այսպիսով, կռահելու հմտությունները զարգացնելով՝ մենք զարգացնում ենք նաև ունկնդրելու հմտությունները: Գիտարկենք որոշ հնարներ, որոնք կնպաստեն ունկնդվող նյութի ավելի դյուրին ընկալմանը:

1. Word Association – Չուգորդումը /Association/ հիշողության ամենահիմնական մեխանիզմն է: Գաղափարներն ու հակացությունները փոխկապակցված են մարդու հիշողության մեջ: Այս կապը հիմնված է մարդու նախորդ փորձառության վրա, և վերջնական վերլուծության ժամանակ հնարավորինս ճշգրիտ ներկայացնում է իրական աշխարհում առկա երևույթների միջև օբյեկտիվորեն գոյություն ունեցող կապը: Որոշակի իրավիճակներում որևէ գաղափար կամ հասկացություն կարող է ուղեկցվել նրան առընչվող այլ գաղափարների կամ հասկացությունների շղթայի ի հայտ գալով: Այս երևույթը կոչվում է զուգորդում (եզրույթը առաջարկվել է XVIII դարում Ջոն Լոկի կողմից): Նախքան լսելը ուսանողներին տրվում է ժամանակ մտածել այն բոլոր երևույթների մասին, որոնք որոշակի առընչություն ունեն դասի հիմնական թեմայի հետ: Գրատախտակին գրվում է առանցքային բառը (key word), իսկ ուսանողներին առաջարկում են այդ երևույթի հետ կապված բառեր կամ բառակապակցություններ ասել: Որպես տարբերակ կարելի է գրատախտակին ավելացնել մի շարք բառեր, որոնք անմիջապես վերցված են տեքստից և առաջարկել ուսանողներին գուշակել թե՛ ինչի մասին է լինելու նյութը: Այսպիսով հենքային գիտելիքները կիրառելով՝ նրանց նախապատրաստում ենք արդյունավետ ունկնդրման:

2. Որպես տարբերակ կարելի է առաջարկել «համը ֆիլմի» դիտումը: Ուսանողները դիտում են նախապատրաստված նյութը առանց ձայնի և փորձում են գուշակել թե՛ ինչի մասին է լինելու տեքստը: Այստեղ մեծ է արտալեզվական բաղադրիչների դերը (մարմնի լեզուն, ժեստերը):

3. Ունկնդրում՝ հիմնական իմաստը հասկանալու համար (listening for the gist): Տվյալ առաջադրանքը ուսանողների մոտ զարգացնում է մի շատ կարևոր հմտություն՝ էականը անէականից սահմանազատելու հմտությունը: Իրական կյանքում նրանց դժվար թե հնարավորություն տրվի միևնույն բանը լսել մի քանի անգամ, այսպիսով նրանք պետք է մշակեն որոշակի մարտավարություն՝ անծանոթ բառերի, երևույթների հետ բախվելու իրավիճակներում երկիմաստությունից խուսափելու համար: Սովորեցնել, որ նրանք կարող են հասկանալ և այսպիսով սովորել նույնիսկ այն դեպքում, երբ որոշ բառերի իմաստը նրանց հայտնի չէ: Առաջադրանքն իրենից ներկայացնում է մի շարք հարցեր տեքստի հիմնական գաղափարի շուրջ, որոնց ուսանողը պետք է պատասխանի: Այստեղ հարկ է նշել, որ ուսանողը կարող է պատասխանել այս հարցերին անկախ այն հանգամանքից, որ որոշ բառեր և բառակապակցություններ այդպես էլ մնում են չվերծանված:

4. Հատուկ տեղեկատվության համար կատարվող ունկնդրում (Listening for specific information): Երբեմն իրական կյանքում մենք լսում ենք միայն որոշակի տեղեկություն՝ առանց հաշվի առնելու մնացածը: Օրինակ՝ եղանակի տեսությունը, երբ մեզ հետաքրքրում է միայն մեր քաղաքի ջերմաստիճանը, կամ

երբ մենք նստած ենք մետրոյում և սպասում ենք մեր կանգառին, մենք չենք լսում մանրամասները, այլ՝ միայն մեր կանգառի անունը: Դիցուք, մենք ցանկանում ենք լսել գնացքների չվացուցակի մասին տեղեկատվություն: Մայրենի լեզվի դեպքում մենք հստակ պատկերացնում ենք, թե ինչ բառապաշար է կիրառվելու: Եթե մեզ խնդրեն գուշակել, թե ինչ է ասելու հաղորդավարը, մեզանից շատերը կառաջարկեն հետևյալ տարբերակը գնացքը մեկնում է/ ժամանում է հետևյալ հարթակից, այսինչ ժամին: Մենք արդեն պատկերացում ունենք թե ինչ պետք է ասվի և ինչպիսի տեղեկատվության է պետք ուշադրություն դարձնել: Այլ խոսքերով ասած, մենք ունենք պատրաստի սցենար ցանկացած իրավիճակի համար, և այն օգնում է մեզ հասկանալ/ վերծանել ստացվող տեղեկատվությունը (Richards, 1983; Morley, 1991): Այսպիսով, օտար լեզու դասավանդ ուսուցիչը պետք է օգնի ուսանողներին նախ կազմել, այնուհետև՝ կիրառել պատրաստի սցենարներ՝ լսողական առաջադրանքները հաղթահարելու համար:

Ունկնդրելու ընթացքում կատարվող առաջադրանքներն ուղղակիորեն կապված են տեքստի հետ: Ուսանողները դրանք կատարում են ունկնդրելու ընթացքում, կամ անմիջապես հետո:

Այս փուլի ընթացքում նրանք պետք է լինեն առավել ուշադիր, որպեսզի ակտիվորեն մշակեն ստացվող նյութը և ճշգրիտ կատարեն հանձնարարությունը: Ինչևէ, եթե ուսուցիչը հստակ ներկայացնի առաջադրանքը, դրա նպատակը և պահանջները, ուսանողներին հեշտ կլինի կենտրոնանալ նյութի վրա: Լսելու ընթացքում կիրառվող առաջադրանքների մեծ մասը միտված է հետևյալ հմտությունների զարգացմանը՝

- Ունկնդրում՝ նյութի հիմնական իմաստը պարզելու համար (Listening for the gist)
- Ունկնդրում՝ հատուկ տեղեկատվության համար (Listening for specific information)
- Ունկնդրում խոսողի կարծիքը պարզելու նպատակով (Listening for the speaker's attitude or opinion)

Ներակայացնենք առաջադրանքների մի քանի օրինակ՝

1. **Լսել և նշել: (Listen and tick.)** Առաջադրանքի դյուրինությունը կամ բարդությունը կախված է նրանից, թե ուսուցիչն ինչ է պահանջում ուսանողներից: Եթե, օրինակ, ուսանողները պարզապես պետք է նշեն (tick) այն ամենը ինչ լսում են, ապա առաջադրանքը բավականին հեշտ կլինի իրականացնել: Այսպիսի առաջադրանքները հատկապես հարմար են սկսնակ ուսանողների համար:

2. **Լսել և նշել հերթականությունը: (Listen and sequence.)** Գոյություն ունեն բազմաթիվ նմանատիպ առաջադրանքներ: Ուսանողները պետք է պարզեն, թե ինչ հերթականությամբ են տեղի ունենում գործողությունները: Առաջադրանքը կարելի է կատարել հաջողությամբ նույնիսկ բազմաթիվ անժամոթ բառերի առկայության դեպքում: Սա նպաստում է ուսանողների մոտ սեփական

լտղական գիտելիքների հանդեպ վստահության ձևավորմանը, որը նրանք հաստատապես կկիրառեն հետագայում իրական կյանքում:

3. **Լսել և լրացնել բացթողումները: (Gap filling activities.)** Նմանօրինակ առաջադրանքները առավել հաճախ են կիրառվում լսարանում: Առաջադրանքի պահանջն է լսել և լրացնել բացթողումները: Առաջադրանքը կարող է ծառայել մի շարք նպատակների, որոնց թվում՝ ամրապնդել բառային, հնչյունային, քերականական նյութը:

4. **Ճիշտ կամ սխալ: (True-false activities.)** Առաջադրանքի հիմնական նպատակն է պարզել արդյոք առաջադրանքում նշված երևույթները կամ գործողությունները ճիշտ են, թե սխալ ըստ համատեքստի:

Ունկնդրելուց հետո կատարվող առաջադրանքները ստուգում են, թե որքան լավ է ուսանողը հասկացել խոսքը: Սակայն այստեղ պետք է նշել, որ եթե խոսքը չափից ավելի երկար է, ունկնդիրները կարող են մոռանալ, թե ինչ են նրանք լսել, քանի որ նույնիսկ մայրենի լեզվում մենք սովորաբար հիշում ենք միտքը, սակայն չենք հիշում այն ճշգրիտ բառապաշարը, որը կիրառվել էր խոսքում: Եկեք դիտարկենք այս տիպի մի քանի առաջադրանք:

1. **Քազմակի ընտրության առաջադրանքներ և բաց հարցեր: (Multiple-choice և open-ended questions.)** Առաջին տարբերակի դեպքում ուսանողից պահանջվում է ընտրել յոթաքանչյուր հարցին համապատասխան պատասխանի տարբերակը: Ի տարբերություն առաջին տարբերակի երկրորդ տարբերակը պահանջում է ավելի շատ ինքնուրույն աշխատանք՝ ուսանողը կամ պետք է պատասխանի հարցին ելնելով այն տեղեկատվությունից, որը նա ստացել է լսելու ընթացքում, կամ արտահայտում է իր իսկ կարծիքը:

2. **Նշումներ և բացթողումների լրացում: (Note-taking և gap-filling.)** Այս առաջադրանքում շատ ակրնհայտ կերպով միավորված են ինչպես ունկնդրելու ընթացքում կատարվող առաջադրանքները, այնպես էլ ունկնդրելուց հետո կատարվող առաջադրանքները: Ուսանողները նախ լսում են բավականին երկար խոսք՝ ընթացքում որոշ նշումներ անելով: Այնուհետև ուսուցիչը նրանց տալիս է տեքստի թերի տարբերակ, որը նրանք պետք է լրացնեն կիրառելով իրենց գրառումները:

Ամփոփելով նշենք, որ ունկնդրումը բարդ գործընթաց է, որի ժամանակ ունկնդիրը բազմաթիվ գործառույթներ է իրականացնում: Սա մի յուրահատուկ մարտահրավեր է մի շարք պատճառներով՝

1. Ունկնդրելու ժամանակ անձը ստանձնում է յուրահատուկ դեր, այն է՝ նա հանդես է գալիս կամ ակտիվ դերակատարությամբ՝ երես առ երես շփման ժամանակ, կամ պասիվ դերակատարությամբ՝ ունկնդրելով այլոց խոսքը:

2. Ունկնդրումը ներառում է լեզվի բոլոր շերտերը՝ ուսանողները լեզուն լսում, կիրառում են ոչմիայն ակադեմիական նպատակներով (դասախոսություններ, սեմինարներ, կոնֆերանսներ), այլև լսում/դիտում են նաև առօրյա խոսակցական բառապաշարով հարուստ ֆիլմեր, երգեր, և այլն:

3. Մեկ այլ մարտահրավեր է իրենից ներկայացնում քերականությունը, իր ձևափոխված, կրճատված տարբերակներով("altered" and "reduced" language forms): Օրինակ՝ I wanna go, Just a sec:

4. Եվ վերջապես վերը նշված գործոններին գումարվում է հաղորդվող նյութի արտաբերման արագությունը: Ի տարբերություն ընթերցանությանը, ունկնդրելու գործընթացի արագությունը կախված չէ, չի կառավարվում ունկնդրի կողմից:

Ուսուցչի դերը այստեղ չի սահմանափակվում միայն որևէ նյութ լսարան բերելով և անպատրաստ ուսանողների համար խորթ առաջադրանքներ հանձնարարելով: Ուսուցիչը պետք է լսարանում կիրառի տվյալ ուսանողների լեզվի իմացությանը համապատասխանող լեզվական նյութ՝ ունկնդրումը բաժանելով որոշակի փուլերի, որտեղ համապատասխան առաջադրանքների միջոցով կզարգացնենք վերից վար և վարից վեր հմտությունները: Պետք է հաշվի առնել մեր ուսանողների կարիքները և հետաքրքրությունները, և համապատասխանաբար պլանավորենք դասերը:

Եթե կիրառենք բոլոր վերը նշված կետերը, ապա հնարավորինս կկարողանանք տալ մեր ուսանողներին այն գիտելիքները, որոնք նրանք հետագայում կկիրառեն իրական կյանքում հաղորդակցման ժամանակ:

Դժբախտաբար ունկնդրելու հմտությունները զարգացնելու համար հատկացվող լսարանային ժամանակը սահմանափակ է, այսպիսով ուսանողներին պետք է քաջալերել որքան հնարավոր է շատ զարգացնել այդ հմտությունները նաև արտալսարանային աշխատանքի միջոցով: Բարեբախտաբար մեր օրերում համացանցը բավականին մեծ հնարավորություններ է ընձեռում տարատեսակ ուսուցողական ծրագրերի ձեռք բերման համար (www.bbc.co.uk, www.britishcouncils.com, www.breakingnewsenglish.com): Կիրառելով համացանցը՝ ուսանողները կարող են գտնել իրենց լեզվի իմացությանը համապատասխան նյութեր և հնարավորինս հարստացնել գիտելիքները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Harmer J. *The Practice of English Language Teaching*. London: Longman, 1991.
2. Morley J. M. *Listening Comprehension in Second/Foreign Language Instruction* // M. Celce-Murcia (ed.) *Teaching English as a Second or Foreign Language (Second Edition)*. New York: Newbury House, 1991.
3. Nunan D. *Language Teaching Methodology*. London: Prentice Hall, 1998.
4. Peterson P.W. *A Synthesis of Methods for Interactive Listening* // M. Celce-Murcia (ed.), *Teaching English as a Second or Foreign Language (Second Edition)*. New York: Newbury House, 1991.
5. Porter D. & Roberts. *Authentic Listening Activities* // M.H. Long & J.C. Richards (eds.) *Methodology in TESOL*. Rowley, Mass.: Newbury House, 1981.
6. Richards J. C. *Listening Comprehension: Approach, Design, Procedure* // M.H. Long & J. C. Richards (eds.) *Methodology in TESOL*. Rowley, Mass.: Newbury House, 1983.

7. Ur P. Teaching Listening Comprehension. Cambridge: Cambridge University Press, 1984.
8. <http://www.teachingenglish.org.uk/article/listening-top-down-bottom>
9. <http://eltnotebook.blogspot.com/2007/02/teaching-listening-top-down-or-bottom.html>
10. <http://eltnotebook.blogspot.com/2006/12/why-dont-they-understand.html>
11. <http://languageinstinct.blogspot.com/2006/11/up-from-bottom-or-down-from-top.html>

Э. ВОСКАНИЯН – *Нисходящий подход или восходящий подход?* – Основная функция языка – коммуникация, но мы не должны забывать, что общение будет неполным, если то, что мы говорим, будет непонятым слушателям. Одним из наиболее важных и фундаментальных навыков в изучении иностранных языков является аудирование, его важность для нашего повседневного общения трудно переоценить. Аудирование является наиболее распространенным видом коммуникативной деятельности, поэтому ученые пытаются найти соответствующие методы для его обучения. Статья посвящена двум основным подходам преподавания аудирования (нисходящий подход и восходящий подход) и особенностям их использования в учебном процессе.

Ключевые слова: методология, аудирование, нисходящий подход, восходящий подход, коммуникация, изучение иностранных языков

E. VOSKANYAN – *Top down or Bottom up?* – Communication is the main function of language but we must not forget that it will be incomplete if what we say is incomprehensible for the hearer. One of the most important and fundamental skills in language learning is listening, its importance for our daily communication cannot be overestimated. Listening is the most common type of communication, so scientists are trying to find appropriate methods for teaching it. The paper touches upon the two basic methods of foreign language teaching (top-down and bottom-up) and their use in classroom.

Key words: methodology, top-down approach, bottom-up approach, listening, communication, foreign language learning